ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՃԱՄՊՐՈՒԿ 2024» լրագրողական ամենամյա մրցույթ

ՀՀ Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունը (ՄՔԾ), ՄԱԿ-ի Փախստականների գործակալությունը (ՄԱԿ ՓԳՀ) և «Մարդը կարիքի մեջ» միջազգային կազմակերպությունը շարունակում են **«ՃԱՄՊՐՈՒԿ» ամենամյա լրագրողական մրցույթի** ավանդույթը:

Մրցույթին կարող են ներկայացվել **2023 թ. դեկտեմբերի 5-ից մինչև 2024 թ. նոյեմբերի 30-ն ընկած** հատվածում հրապարակված, հետևյալ թեմաների և/կամ բնակչության խմբերի վերաբերյալ նյութերը.

- Միգրացիոն գործընթացներ. միտումներ, սահմանահատումներ, ոլորտի վերլուծություն
- Իմիգրացիոն հոսքեր. կացության կարգավիճակներ, միտումներ և ինտեգրում
- Աշխատանքային միգրացիա, էմիգրացիոն հոսքերը Հայաստանից, ոլորտի խնդիրները
- Վերադարձ և վերաինտեգրում
- Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներ. կարգավիճակ, փաստաթղթավորման գործընթացներ, ինտեգրում, ոլորտի խնդիրներ
- Ապաստան հայցողներ, փախստականներ. նրանց մասնակցությունը ընդունող համայնքի կյանքին
- Քաղաքացիություն չունեցող անձինք
- ԵՄ-ՀՀ վիզաների ազատականացման գործընթաց
- Անկանոն միգրացիան դեպի ԵՄ, դրա կանխարգելումը և հետևանքները:

Մրցույթին կարող են մասնակցել հեռուստատեսության, ռադիոյի, տպագիր մամուլի, էլեկտրոնային մեդիայի բոլոր ժանրերում գործունեություն ծավալող լրագրողներ և թղթակիցներ, անկախ բլոգերներ, լուսանկարիչներ, մուլտիմեդիայի մասնագետներ:

***Ուշադրություն**. մրցույթի շրջանակում չեն դիտարկվի այն նյութերը, որոնք ստեղծվել են որևէ դրամաշնորհային ծրագրի շրջանակում՝ վճարովի հիմունքներով:*

Ներկայացված աշխատանքները կգնահատվեն ժյուրիի կողմից, ինչի արդյունքում կազդարարվեն **1-ին, 2-րդ և 3-րդ մրցանակների հաղթողները**: Մրցանակաբաշխությունը տեղի կունենա 2024 թ. դեկտեմբերին:

Նյութերն անհրաժեշտ է ուղարկել **մինչև 2024 թ. դեկտեմբերի 1-ը, ժ. 23:59,** էլ-փոստի **mcs@gov.am** հասցեին՝ **պարտադիր նշելով հետևյալը.**

- հեղինակի անունը և ազգանունը, հեռախոսի համարը, էլ-փոստի հասցեն,
- հրապարակման ամսաթիվը, հղումը, հեղինակության լրացուցիչ հիմնավորում (եթե մասնակիցը տեսնում է դրա կարիքը), լրատվամիջոցի անվանումը:

Հարցերի դեպքում խնդրում ենք զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝ +374 94 738 454 (Անի) կամ +374 93 253 151 (Օֆելյա):

* * *

«ՃԱՄՊՐՈՒԿ 2024» լրագրողական մրցույթի նպատակը թեմատիկ որակյալ լուսաբանումը խրախուսելն է: 2010 թվականից ի վեր՝ Հայաստանում փախստականների, բռնի տեղահանված անձանց և միգրանտների խնդիրների ու նրանց ինտեգրման գործընթացների վերաբերյալ գրագետ մեդիա բովանդակությունը քաջալերելով՝ նպատակ ունենք ոգեշնչելու լրագրողներին՝ առավել ընդգրկուն, ճշմարիտ և անաչառ մոտեցումներ ցուցաբերելու տեղահանության և միգրացիայի վերաբերյալ լուսաբանման գործում:

«ՃԱՄՊՐՈՒԿ 2024» լրագրողական մրցույթը իրականացվում է Եվրոպական միության Միգրացիոն գործընկերության գործիքի (MPF) միջոցով ֆինանսավորվող ՄՔՄՄԿ-ի և ՄԱԿ ՓԳՀ-ի համաֆինանսավորմամբ: